


ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Զեկուցող՝ Սիրեկան Օհանյան
<<Երևաննախագիծ>> ՓԲԸ տնօրեն,
Երևան քաղաքի գլխավոր ինժեներ



Քաղաքի ճանապարհափողոցային ցանցի հիմքը կազմավորում են մայրուղային փողոցներն ու ճանապարհները, որոնք իրենց վրա են վերցնում հիմնական տրանսպորտային հոսքը:

Երևանում հիմնական տրանսպորտային կապերը ապահովվում են մայրուղային փողոցների միջոցով, որոնք կապում են հարևան ծայրամասային բնակելի թաղամասերը միմյանց հետ և շառավղային մայրուղիներով, որոնք սկիզբ են առնում քաղաքի կենտրոնական մասից:



Այսօր քաղաքի տարածքում տրանսպորտային աշխատանքի անհավասարաչափ բաշխվածության պատճառով հիմնական ծանրաբեռնվածությունն ընկնում է քաղաքի կենտրոնական մասի վրա:

Երևանի ճանապարհափողոցային ցանցի բարելավման ուղղությամբ կարևորվում է երեք հիմնական ուղղություններ՝

ա. քաղաքի կենտրոնի բեռնաթափում,


բ. քաղաքի կենտրոնի ճանապարհափողոցային ցանցի բարելավում, գ.

Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:

ա. Երևանի կենտրոնի բեռնաթափում: Այն միտված է քաղաքային տնտեսության շահագործման, տրանսպորտի անխափան ու անվտանգ երթևեկության, հետիոտնի շարժման, բնապահպանական, հանգստի և ժամանցի խնդիրների լուծմանը:

Այս մասով հիմնական շեշտադրումը դրված է կենտրոնը շրջանցող տարանցիկ

ճանապարհների կազմակերպմանը, որին այսօր էլ մեծ ուշադրություն է դարձվում:



Վերջին տարիներին շահագործման են հանձնվել Ծիծեռնակաբերդի խճուղին, Ուլնեցի-Ռուբինյանց փողոցները միացնող ճանապարհը, երկար սպասված Ծովակալ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին միացնող անընդհատ երթևեկության մայրուղին, որի շարունակության մասով արդեն նախագծված է Իսակով-Արշակունյաց 2 կմ-ոց հատվածը՝ Հրազդան գոտի վրա 104 մետրանոց կամրջով:

Լենինգրադյան փողոց-Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա քաղաքային մայրուղի



Լենինգրադյան փողոց-Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա քաղաքային մայրուղու գլխավոր հատակագիծ



Լենինգրադյան փողոց-Իսակովի պողոտա քաղաքային մայրուղու ավարտված տեսքը



Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա քաղաքային մայրուղու նախագիծ



Ց Ա Ն Կ

նախատեսվող փողոցների և ճանապարհների իրացման առաջարկ

№№	Մայրուղային փողոցների անվանումը	երկարությունը, մ
1	2	3
1	Տիգրան Մեծի պող.- Մյասնիկյանի պողոտա /լայնացում/	4500
2	Իսակովի պող.- Արշակունյանց պող. /շինարարություն/	2000
3	Շերամի փ-ից մինչև նախագծվող Արևմտյան շրջանցիկ ճանապարհ (Արագընթաց ճանապարհ) նախագծում	4100
4	Դավիթաշեն - Աշտարակի խճուղի /նախագծի ճշտում/	2450
5	Շերամի փ. շարունակություն (Տիչինայի փ. մինչև Աշտարակի խճուղի) /նախագծի ճշտում/	4850
6	Սասնա Ծռերի շարունակություն (Դավթաշենի բնակելի շրջան) շինարարություն	600

Երևանի կենտրոնը տարանցիկ տրանսպորտի միջոցներից բեռնաթափելու նպատակով ներկայումս նաև Ասիական զարգացման բանկի հետ ընթանում են աշխատանքներ Երևանի կենտրոնը շրջանցող մի քանի մայրուղիների և դրանց առանձին հանգույցների նախագծման, կառուցման և վերակառուցման ուղղությամբ՝

- Շիրակի փողոցից մինչև Արտաշատի խճուղի միջպետական նշանակության մայրուղի (մայրուղու երկարությունը՝ 4340 մետր, անցուղիները՝ 995 մետր, ընդհանուրը՝ 5335 մետր)։

- Արգավանդը Շիրակ փողոցի հետ կապող ճանապարհ (մայրուղու երկարությունը՝ 1300 մետր, անցուղիները՝ 800 մետր, ընդհանուրը՝ 2100 մետր)։

- Դավթաշենի կամուրջ - Հալաբյան փողոց - Աշտարակի խճուղի կապ (մայրուղու երկարությունը՝ 2250 մետր, անցուղիները՝ 2380 մետր, ընդհանուրը՝ 4630 մետր)։

Գլխավոր հատակագծով նախատեսված մայրուղային փողոցներում և ճանապարհներում նրանց իրականացման գործընթացում նախատեսվում է կառուցել

արհեստական կառույցներ՝ տարբեր մակարդակներում հանգուցալուծումներ, կամուրջներ, թունելներ:


բ. Երևանի կենտրոնի ճանապարհափողոցային ցանցի բարելավում:

Քաղաքի կենտրոնական մասում մայրուղային ցանցի խտության ցուցանիշը պետք է լինի բարձր քան քաղաքի միջինը (հանձնարարելի խտությունը 4.5-5.0 կմ/քառ.կմ): Մայրուղային փողոցների երկարության քաղաքի կենտրոնական մասի միջուկի սահմաններում կազմում է մոտ 29 կմ, իսկ խտությունը 5.3 կմ/քառ.կմ:


Կենտրոնում հիմնական ուղադրությունը պետք է դարձնել գործող փողոցների թողունակության մեծացմանը և տրանսպորտային միջոցների անընդհատ հոսքերի հնարավոր ապահովմանը:

Գլխավոր հատակագծով նախատեսված մայրուղային և տեղական նշանակության փողոցներում դրանց իրականացման գործընթացում նախատեսվում է կառուցել արհեստական կառույցներ՝ տարբեր մակարդակներում հանգուցալուծումներ, կամուրջներ, թունելներ: Որքան էլ որ կառուցման առումով ծախսերը շատ են, բոլոր դեպքերում խնդիրները ցանկալի է լուծել ստորգետնյա տարբերակներով՝ հաշվի առնելով Երևանի կառուցապատման առանձնահատկությունները:


**ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ
ՄԱՍՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑ**




**Արշակունյաց պողոտայի և Նժդեհի փողոցի հատման հրապարակում
/«Հայրենիք» կինոթատրոնի հրապարակ/ տրանսպորտային հանգույց**



Արշակունյաց պողոտայի և Նժդեհի փողոցի հատման հրապարակի տրանսպորտային հանգույցի սխեմա



Լենինգրադյան, Մեքաստիա և Շիրազի փողոցների խաչմերուկում տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույց



Ֆրագմենտ Երևանի 2005-2020 թթ. գլխավոր հատակագծից



Մաշտոցի - Բաղրամյան - Մայաթ Նովա պողոտաների հատման հանգույցում /Ֆրանսիայի հրապարակ/ տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույց



Ֆրանսիայի հրապարակի իրավիճակը:



Խիստ անհրաժեշտ է հետիոտնի հոսքերի անվտանգ շարժման կազմակերպումը տարբեր տեսակի անցումներով՝ հնարավորինս ապահովելով նաև հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելի տեղաշարժը:

գ. Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:

Երևան քաղաքում ավտոմոբիլային տրանսպորտի հոսքերը թեթևացնելու նպատակով, անհրաժեշտություն է ստեղծել Երևան քաղաքը շրջանցող ճանապարհային ցանց, որտեղ պետք է հաշվի առնել հետևյալ գլխավոր ուղղությունները՝


ա. Պարսկաստան – Մեղրի – Արտաշատ – Գյումրի – Բավրա – Վրաստան,

բ. Պարսկաստան – Մեղրի – Արտաշատ – Աշտարակ – Վանաձոր – Բազրատաշեն – Վրաստան,

գ. Պարսկաստան – Մեղրի – Արտաշատ – Սևան – Դիլիջան – Նոյեմբերյան – Բազրատաշեն – Վրաստան:

Առաջարկվում է վերակառուցել 3-րդ ուղղությունը, որը Երևանը շրջանցում է արևելյան ուղղությամբ՝ Արտաշատի խճուղի – Նուբարաշեն – Զրվեժ – M4 (Երևան – Սևան) մայրուղու ճանապարհային հատվածը՝ լուծելով սողանքային հատվածների ինժեներական պաշտպանության խնդիրները:

1-ին և 2-րդ ուղղության համար Երևանի շրջանցումը կազմակերպել արևմտյան հատվածով, որը անցնելու է Արտաշատի խճուղի (M2) – Մասիս – Հայանիստ՝ հատելով M5 (Էջմիածնի խճուղի) - Բաղրամյան՝ միանալով M1 (Արտաշատի խճուղի) - Պողոսյան բնակավայրի հյուսիսային մասով, այնուհետև դեպի Գյումրի կամ Վանաձոր:



Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրագործման գործընթացի մոնիտորինգի շրջանակներում առաջանում են ճանապարհային ցանցի զարգացման որոշակի մոտեցումների վերանայման և քննարկման անհրաժեշտություն, որոնք սահմանված կարգով համապատասխան ուսումնասիրության կենթարկվեն:

Ց Ա Ն Կ

**Երևան քաղաքի գլխավոր հատակագծի շրջանակներում քննարկման ենթակա
ճանապարհային ցանցի զարգացման առաջնահերթ միջոցառումների**

NN ը/կ	Օբյեկտի անվանումը	Ծանոթություն
1	2	3
1.	Ձվարթնոց՝ օդանավակայան - Կենտրոն	նոր ճանապարհ
2.	Ա. Խաչատրյան – Մամիկոնյանց փողոցներ	միացման հնարավորություն
3.	Լենինգրադյան – Սեբաստիա-Շերամի փողոց (արագընթաց ճանապարհ)	վերանայում
4.	Կորյունի - Վաղարշյան փողոցներ	1700, վերանայում
5.	Բաֆֆու փողոցի շարունակության ճանապարհը մինչև Զվարթնոց օդանավակայան տանող նոր ճանապարհ	1100
6.	Նորագավիթ-Արտաշատի խճուղի խաչմերուկում տրանսպորտային հանգույց	սխեմայի մշակում